

Հետվճարային «Միքս» սակագնային պլանի ակտիվացման և օգտագործման պայմաններ

Սակագնային պլան	Շարժական համացանցի ծավալ (ԳԲ)	Բույեներ դեպի Արցախ և ՀՀ	Ներցանցային բույեներ	Ներցանցային SMS-ներ	Ամսավճար, ՀՀ դրամ (Ներառյալ ԱԱՀ)
Միքս 1900	10	190	Անսահմանափակ	200	1,900
Միքս 2900	40	350+350	Անսահմանափակ	300	2,900
Միքս 4900	Անսահմանափակ	500+500	Անսահմանափակ	400	4,900
Միքս 7900	Անսահմանափակ	790+790	Անսահմանափակ	600	7,900

1. Սույն պայմաններին համապատասխանող սակագնային պլանները գործում են միայն հետվճարային ֆիզիկական անձ-բաժանորդների համար:

2. Բաժանորդները սակագնային պլանը կարող են ակտիվացնել միայն սպասարկման կենտրոն ներկայանալու և համապատասխան դիմում-հավելվածը ստորագրելու միջոցով: Սակագնային պլանի փոփոխության համար բաժանորդի կամահայտնության (սպասարկման կենտրոն ներկայանալու միջոցով) բացակայության դեպքում, յուրաքանչյուր ամսվա սկզբին իր կողմից ընտրված սակագնային պլանը վերաակտիվանում է:

3. Ամսվա ընթացքում որևէ հետվճարային սակագնային պլան հնարավոր է ակտիվացնել միայն մեկ անգամ:

4. Սակագնային պլանի գինը հաշվարկվում է օրերի համամասնությամբ՝ դիմումը ներկայացնելու օրվանից:

5. Տրամադրվող միավորները հասանելի կլինեն սակագնային պլանի ակտիվացման օրվանից մինչև ընթացիկ ամսվա վերջին օրը ներառյալ (անկախ ակտիվացման օրվանից), որից հետո չօգտագործված ծավալը կգրոյանա:

6. Վերոնշյալ ժամանակահատվածում տրամադրված միավորները սպառելուց հետո կշարունակեն գործել հաստատված սակագները (1 բույե՝ 21 դրամ, 1 SMS՝ 8 դրամ, 1 ՄԲ՝ 13 դրամ):

7. Սակագնային պլանի գինը հաշվեգրվում է բաժանորդի հաշվին ակտիվացմանը հաջորդող ամսվա սկզբին, որը բաժանորդի կողմից ենթակա է վճարման մինչև այդ ամսվա տասնութերորդ օրը: Նշված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հեռախոսագիծը միակողմանի անջատվում է: Մինչև այդ ամսվա վերջին օրը ներառյալ բաժանորդի կողմից վճարումները չկատարելու դեպքում ծառայությունների մատուցումը դադարեցվում է:

8. Սակագնային պլանի միավորները չեն գործում ռոումինգում:

9. Սակագնային պլանից օգտվող բաժանորդները ազատվում են 500 ՀՀ դրամ ամսական բաժանորդավճարից:

10. Նոր հեռախոսահամար գնելու դեպքում բաժանորդը պարտադիր պետք է ակտիվացնի սակագնային պլաններից որևէ մեկը, իսկ ակտիվ բաժանորդի կողմից «Միքս» սակագնային պլանի ակտիվացման դեպքում, բաժանորդը այլևս չի կարող հրաժարվել և վերադառնալ հետվճարային համակարգի նախկին պայմաններին:

11. Ծառայությունները կարող են վատթարանալ, ընդհատվել կամ ուղեկցվել խանգարումներով շինությունների հարևանությամբ կամ դրանց ներսում, թունելներում, նկուղներում կամ ստորգետնյա այլ շինություններում, կապված տեղանքի առանձնահատկությունների, օդերևութաբանական պայմանների հետ Օպերատորից անկախ և վերջինիս մեղքը բացառող այլ պատճառով:

12. Մատուցվող ծառայությունների արագությունը կախված է տարածքի ռելիեֆից, առկա ռադիոճաճկույթից, օգտագործվող սարքի տեխնիկական հնարավորություններից, ցանցի ծանրաբեռնվածությունից, սակագնային պլանի ցուցանիշներից և այլ արտաքին գործոններից:

13. Ծառայությունները Օպերատորի կողմից մատուցվում են շուրջօրյա, առանց ընդմիջումների, բացառությամբ վերանորոգման և/կամ պրոֆիլակտիկ աշխատանքներով և/կամ վթարով և/կամ ֆորս-մաժորով պայմանավորված ընդմիջումների:

14. Համաձայնագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն համաձայնագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղադրված տեղեկատվությունների միջև անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին: